

ՀՀ ԳԱԱՅՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ Լ ԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆՆԱ ՌՈՒԲԵՆԻ ՂԱՐՍԼՅԱՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ

Ժ.02.01- «Հայոց լեզու» մասնագիտությունը ամբիբանասիրական գիտություններին թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Լ. Կ. Եզեկյան**

Պաշտոնական բանասիրական գիտությունների դոկտոր,

ընդդիմախոսներ՝ պրոֆեսոր **Գ. Կ. Խաչատրյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ
Գ. Լ. Խաչաթյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվա հասարակագիտական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. մարտի 6-ին՝ ժամը 15⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՅ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. փետրվարի 4-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

բանասիրական գիտությունների թեկնածու,

դոցենտ

Ն. Մ. Սիմոնյան

ԱՏԵՆԱԽՈՒԻ ԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Իրավագիտությունը, լինելով ժամանակի լրջագույն և պահանջարկ ունեցող գիտակարգերից մեկը, քաղաքակիրթ հասարակության համար ցանկացած իրավական նորմի խախտման դեպքում արդարության վերականգնման առաջին և անփոխարինելի հիմնասյունն է: Հայ իրավունքի արմատները գալիս են դեռևս վաղ ժամանակներից: Դրանք ի սկզբանե արտահայտվել են ազգային սովորույթներում, թագավորական հրամաններում և հոգևոր կանոններում: Տարիների ընթացքում ձևավորվում է հայ իրավական լեզվի բավականին հարուստ բառապաշար, որի բառամիջուկը կազմող տերմինները՝ իբրև մասնագիտական բառեր, առաջին անգամ գործածվում են հայ իրավաբանական գրականության օրենքների առաջին ամբողջական ժողովածուում՝ Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի»-ում: Տարբեր դարաշրջաններում իրավական մտքի տարաբնույթ զարգացմամբ, հետևաբար մասնագիտական նոր աղբյուրների լույսը նծայմամբ հայ իրավաբանական բառապաշարը, ունենալով հնդեվրոպական նախալեզվից, ոսկեդարյան և միջնադարյան իրավագիտական աղբյուրներից ժառանգած տերմինների հարուստ պաշար, նոր ժամանակներում ներքին և արտաքին լեզվական միջոցներով համալրվեց մասնագիտական բառերի նոր որակներով: Այսօր մեր ունեցած իրավաբանական տերմինների բավականին հարուստ բառաշարը, որով կառուցվում է ներկայիս ՀՀ օրենսդրական խոսքը, ցավոք, որքան էլ տարօրինակ է, մինչ այժմ առանձնակի ուսուցման ստանդարտի չի արժանացել: Հրատարակվել է գիտական մեկ հոդված, և կատարվել են տասնյակից ավելի մասնագիտական բառարանակազմական աշխատանքներ, որոնք թերևս վերամշակվելու և կատարելագործվելու անհրաժեշտություն ունեն: Հետևաբար, իրավական լեզվի բառապաշարի ոչ բավարար ուսուցման ստանդարտի է պայմանավորված սույն աշխատանքի արդիականությունը:

ՈՒՍՈՒՄՆԱԽԻՐՈՒԹՅԱՆ ՓԱՏՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ

Ուսուցման ստանդարտի փաստական նյութը արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարն է: Մեր ուսուցման ստանդարտի ընթացքում միաժամանակ անդրադարձել ենք հայ հին, միջնադարյան և ժամանակակից իրավաբանական գրականությանը, մասնավորապես հայ իրավական մտքի զարգացումն ապահոված աղբյուրներին, այդ թվում նաև՝ մասնագիտական բառարաններին:

ՍՏԵՆԱԽՈՒՄԻ ԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն աշխատանքը ձեռնարկելիս նպատակ ենք ունեցել ուսումնասիրել հայ իրավաբանական լեզվի բառապաշարն իր զարգացման շրջափուլներով¹՝ հայ իրավական մտքի ձևավորման վաղ ժամանակներից մինչև մեր օրերը: Աշխատել ենք նպատակն իրագործել մեր առջև դրված հետևյալ խնդիրների լուծմամբ.

1. Տարանջատել բնիկ և փոխառյալ իրավաբանական տերմինները: Քննել բնիկ հայերեն տերմինները՝ արմատական բառեր և կախյալ արմատներ ենթաբաժիններով, ներկայացնել դրանց արդիականությունը ժամանակակից իրավաբանական տերմինաամակարգում:

Փոխառությունները դասակարգելով ըստ փոխառու աղբյուրների՝ քննել դրանց հետ կապված ցանկացած լեզվական երևույթ (հայերեն տարբերակների ստեղծում, օտարաբանություն և այլն), ինչպես նաև առանձնացնել և քննել պատճենումներն իրենց ենթատեսակներով՝ որպես փոխառության առանձին տեսակ:

2. Կատարել արդի հայերենի իրավաբանական տերմինների իմաստագործառական քննություն: Ուսումնասիրել հայ իրավունքի զարգացման բոլոր շրջափուլներում գործածվող տերմինների իմաստային առանձնահատկություններն ու իմաստափոխության դեպքերը:

3. Հայ իրավաբանական տերմինաամակարգում առաջ եկած լեզվական որոշ երևույթների (բազմիմաստություն, բացարձակ հոմանիշություն) բացահայտմամբ պարզել ներկայիս իրավական խոսքի պարզ մատուցումը խոչընդոտող դրդապատճառները:

4. Կատարել իրավաբանական տերմինների շերտաբանական քննություն: Հիմք ընդունելով գրական հայերենի զարգացման շրջափուլները՝ առանձնացնել իրավաբանական տերմինների՝ ընդհանուր հայերենյան, գրաբարյան, միջին հայերենյան, աշխարհաբարյան բառաշերտերը՝ իրենց ոչ գործուն (ինաբառեր և պատմաբառեր) և գործուն (ներկայիս օրենսդրական լեզվում գործածվող տերմիններ, նորակազմություններ) բառամթերքով:

5. Համաժամանակյա մոտեցմամբ ուսումնասիրել իրավաբանական տերմինների բառակազմական առանձնահատկությունները (տերմինների կազմություն, կաղապարային կառուցվածքներ,

¹ Հայ իրավական լեզվի բառապաշարի զարգացման շրջափուլները համապատասխանում են գրական հայերենի զարգացման փուլներին:

բաղադրական՝ սերոդ և բաղադրող հիմքեր, բառակազմական տարբերակներ):

6. Հայ իրավաբանական գիտությունների համալսարանի հանրապետական խմբավորված վերլուծական քննությունը բարձրացնել հասարակության հետաքրքրության աճը իրավաբանական գրականության նկատմամբ՝ սեփական իրավունքները ճանաչելու և անհրաժեշտության դեպքում դրանք պաշտպանելու նպատակով:

ԱՏԵՆԱԽՈՒԹ ԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարը առաջին անգամ է գիտական ամսագրի հետազոտության նյութ դարձել: Սույն ուսումնասիրությանը ըստ էության առաջին փորձն է Հայաստանի Հանրապետության ներկայիս օրենսդրության և առհասարակ իրավաբանական ցանկացած պաշտոնական փաստաթղթի բառապաշարի արժևորման և գիտական շրջանառության մեջ դնելու բնագավառում: Որպես հայ իրավական լեզվում գործածվող մասնագիտական տերմիններ լեզվական քննությունն՝ սույն աշխատանքը կարող է նպաստել հայ հասարակության մեջ իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը՝ իրավական խոսքի, նորմերի ճիշտ ընկալմանը, համապատասխան իրավական գործողություններ կատարելուն, ինչպես նաև տերմինագիտության ոլորտում դառնալ իրավաբանական տերմինաբանական հետազոտությունների սկզբնաղբյուր: Ատենախոսությանը կարող է օգտակար լինել թե՛ հայ իրավական լեզվի բառապաշարը հետազոտող մասնագետների, թե՛ ավագ դպրոցի սաների, թե՛ մասնագիտական ֆակուլտետների ուսանողության և թե՛ առհասարակ հայ հանրության համար:

ԱՏԵՆԱԽՈՒԹ ԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության: Թեմայի հիմնադրույթներն արտացոլված են գիտական տարբեր հանդեսներում տպագրված հիևզ հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՒԹ ԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱՃՔՆՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսություն կառուցվածքը բխում է առաջադրված նպատակից, քննարկվող խնդիրներին և արդյունքներին: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններին, համառոտագրություններին և օգտագործված գրականության ցանկերից: Վերջում տրված է հավելված՝ աշխատանքի մեջ գործածված իրավաբանական տերմինների բացատրությամբ: Աշխատանքի ծավալը 169 էջ է: Ատենախոսություն գլուխներին բաշխման հիմքում ընկած են լեզվաբանության մեջ բառապաշարային տարբեր խմբերի ուսումնասիրության սկզբունքներն ու մեթոդները, որոնք ավելի տեսանելի են դարձնում իրավաբանական տերմինափոխարկի կառուցողական բնույթը:

Լերածությունն բաժնում ներկայացված են հարցի ուսումնասիրության աստիճանը, ատենախոսության նպատակն ու խնդիրները, ինչպես նաև հիմնավորված են թեմայի արդիականությունն ու նշանակությունը:

Ատենախոսության **առաջին գլուխը**՝ «Արդի հայերենի իրավաբանական տերմինների ծագումնաբանական քննություն», բաղկացած է երկու ենթագլուխներից:

Ա) Բնիկ հայերեն իրավաբանական տերմիններ: Հնդեվրոպական նախալեզվից ժառանգած 14 բնիկ հայերեն իրավաբանական տերմինները քննում ենք հետևյալ խմբավորմամբ՝ **ա) անկախ արմատական բառեր (առան (sed), գին (wesno), գործ (vorg'), նիստ (nizdo), փորձ (phor- ձևից՝ ձ աճականով), բողոք (bhol)) և բ) կախյալ արմատական բառեր (այց (ais-sk' ha) – հայց (հ աճական), հայցվոր, ի (իք, ինչ, հի, իրաւ, իմն, զի, իր) (k²i) – իրավունք, իրավանորմ, իրավական կարգավիճակ, ինքնիրավչություն, լոյծ (leug') – լուծել, լուծարել, կալ (g²w- əl) – կալ անավորել, կալ անք, մեղ (mel) – մեղք, անմեղսունակություն, մեղադրանք, մեղադրյալ, ցոյց (skeu-sk) – ցուցմունք):**

Բ) Իրավաբանական փոխառյալ տերմիններ: Ծագումնաբանական տեսանկյունից արդի հայերենի իրավաբանական տերմինափոխարկում բավականին շատ են փոխառյալ տերմինները, որոնք բազմաբանակության պատճառով իրավաբանության մուտքն էր օտար իրականությունից (հատկապես պահլավական, ասորական, հունա-հռոմեական) հայ իրականություն: Արդի հայերենի իրավաբանական փոխառյալ տերմինները, ըստ ստեղծման ժամանակի, լինում են **հնագույն, հին և նոր, նորագույն:**

Հին և հնագույն իրավաբանական տերմինները ինչպես գրաբարից անմիջականորեն, այնպես էլ նրա միջնորդությամբ փոխառված բառեր են:

Իբրև ներքին փոխառություններ՝ գրաբարից անմիջականորեն փոխառված իրավաբանական տերմինները գրական

հայերենում պահպանվել են գրաբարյան կազմությամբ, ինչպես՝ **իրավունք, բաժանմունք, հանցանք, գտանք, մեղք** (կազմված **-ունք, -անք, -ք** հոգնակիակերտ մասնիկներով), **իրավագանց, ձերբակալել** (եզակի գործիական հոլովի վերջավորություններով), **ծանուցել, հառուցել** (կազմված **ծանուցանել, հառուցանել՝ -ուցան-** (<ոյց+ան) պատճառակալական անցուցով) և այլ բառեր:

Թվյալին գերազանցությամբ առանձնանում են գրաբարյան շրջանում փոխառված պարսկական փոխառությունները: Սրանք ինքնուրույն բառեր կամ արմատներ են, որոնք արտահայտում են իրավունքի քաղաքացիական, քրեական ճյուղերին, դատական համակարգին վերաբերող հասկացություններ, ինչպես՝ **գրավ (grav), տույժ (töz-ët), տուգանք/վնաս (vinās), պարտք/ (partu-), գանձ (ganj), երաշխիք/ (raxš), ժառանգ (žaradāng), կտակ (gitāk), պաշտպան (paštān), ոստիկան (östikān)** և այլն:

Իրավաբանական փոխառյալ բառեր են հունարենի միջնորդությամբ լատիներենից փոխառված **նոտար (notarius)** և արաբական ծագում ունեցող **կապալ (qabāla)** բառերը: Ժամանակակից իրավական ակտերում իբրև գործունե տերմիններ՝ այս բառերը գործածական են իմաստափոխության հետևանքով ձեռք բերած բոլորովին նոր իմաստներով:

Ասորերենից փոխառված **քուրաքրա (kūrā)** արմատը, որ նշանակում է *«հալոց, բովք, մետաղ հալեցնել ու վառարան»*, Յրայյա Աճառյանի հավաստմամբ իբրև քաղաքիչ գործածական է հետևյալ արմատական կազմություններում՝ *«քրայական «մետաղական», քրեական»*²:

Բավականին մեծ թիվ են կազմում անմիջական ճանապարհով հայերենին անցած այն հնագույն և հին փոխառությունները, որոնք պատմական դարաշրջաններում, հատկապես միջնադարում, իրավական տերմինահամակարգում երբեմնիակտիվ գործածություն են ունեցել: Այսպես՝ **իրավաբանական տերմիններ փոխառված արաբերենից՝ դաի** «վեճ, պահանջ, հայց» < davi, **եմո** «իր, գործ» < emr, **պարսկերենից՝ գունահ** «մեղք, հանցանք» < gonah, **դաղ** «կնիք, դրոշմ, նշան, խարան» < dag, **հուևարենից՝ աստիկա** «մուրհակ» < apodeiksīs, **նոմոս** «օրենք, կարգ» < nomos, **լատիներենից՝ ալվոգայթ** «փաստաբան» < advocates, **արմաշ** «ոստիկան. զինվոր» < arma «զենք», **հին ֆրանսերենից՝ անսիզ** «օրենք» < assises, որից՝ **անսիզվոր** «իրավաբան», **բլայթ** «դատի մեջ պաշտպանություն» < plaid, որից՝ **բլայթել** «դատարանի առաջ իր դատը պաշտպանել» < plaidier, **լեհերենից՝ աբել սցիա** «վճռաբեկ գանգառ» < apelacja < լատ., **արեսոլ** «կալանք» < areszt, **թուրքերենից՝ կելուր** «եկամուտ, օգուտ, շահ» < gelir, **պեհ** «գրավ, երաշխիք, գրավական» < pey:

Արդի հայ իրավաբանական համակարգում նոր և նորագույն փոխառություններին աննախադեպ աճը պայմանավորված է երկրի անկախության, Յայաստանի Յանրապետության և այլ պետություններին միջև հասարակական-իրավական միջազգային նոր

² **Աճառյան Յր.**, Յայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 595:

հարաբերությունների ձևավորմամբ, իրավական կառույցների համալրմամբ և իրավական բնույթի այլ գործառույթներով: Դրանք մեծ մասամբ լատինական, ապա հունական, ֆրանսիական, գերմանական, իտալական և այլ ծագման բառեր են՝ ռուսերենի և այլ էգզոնների միջնորդավորմամբ, ինչպես՝ **ակցեպո<լատ affectus, գլոսսա<հուն. glossa, դելիմիտացիա<ֆր. delimitation** և այլն:

Իրավաբանական միջազգային տերմիններից շատերն ունեն հայերեն համարժեք տարբերակներ, որոնք ինչպես միաբան, այնպես էլ կայուն բառակապակցություններ են: Չնայած այս հանգամանքին՝ իրավական էգզոն հաճախառաջնությունը տալիս է փոխառյալ տերմիններին: Երբեմն դրանց կողքին նշվում են հայերեն համարժեքները: Այսպիսի նախընտրության պատճառը այդ փոխառությունների առավել հասարակայնացված բնույթ, ինչպես նաև միջազգային նշանակություն ունենալն է: Բացի այդ՝ դրանք ամբողջ ծավալով են արտահայտում տվյալ հասկացության բովանդակությունը, օրինակ՝ **աբոնեո (<ֆր. abonner) – սպառող, պլիմենտ (<լատ alimentum) – ապրուստի միջոց, օֆերտա (<լատ offertus) – առաջարկ**: Չայերեն համարժեքները ունենալու դեպքում փոխառյալ բառերը շարունակում են գործածվել և ընկալվել որպես փոխառություններ, քանի դեռ որոշ ժամանակահատվածում գուճահեռաբար գործածվելու ընթացքում դրանցից որևէ մեկը վերջնական հաղթանակ չի տանում:

Լինում է նաև հակառակ երևույթը, երբ հայերեն բառերն են ակտիվորեն կիրառվում ներկայիս իրավական ակտերում, իսկ դրանց փոխառյալ տարբերակները մեծ մասամբ գործածվում են մասնագիտական բանավոր խոսքում կամ երբեմն գրավոր խոսքում նշվում են հայերեն համարժեքի կողքին: Ինչպես՝ *«Գործունեության առանձին տեսակներով, որոնց ցանկը սահմանվում է օրենքով, իրավաբանական անձը կարող է զբաղվել միայն հատուկ թույլ տրված (լիցենզիայի) հիման վրա»* (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, հոդված 52):

Այսպիսի տերմիններ են՝ *կանոնադրություն – ստատուտ (<լատ. statutum), բռնագրավում – կոնֆիսկացիա (<լատ. confiscatio), իրավական դրություն – ստատուս (<լատ. status)* և այլն:

Իրավաբանական տերմինահամակարգի համալրման եղանակներից մեկն է **պատճենումը**: Մեծ թիվ են կազմում հատկապես կառուցվածքային պատճենումները՝ **работодатель – գործատու, судебный следователь – դատախազ, правопорядок – իրավակարգ**:

Այնուամենայնիվ են **երկրորդ գլուխը՝ «Արդի հայերենի իրավաբանական տերմինների հիմնադրոճառական առանձնահատկությունները»**, նույնպես բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխը՝ «Արդի հայերենի իրավաբանական տերմինահամակարգի հիմնադրոճառական դրսևորումները», հետազոտում ենք իրավաբանական տերմինահամակարգի հիմնադրոճառական առանձնահատկությունները, որոնք ինչպես դրական, այնպես էլ

բացասական ազդեցություն են ունենում իրավական լեզվի բառապաշարի կայուն զարգացման վրա:

Իրավաբանական տերմինները մենիմաստ բառեր են, որոնք, համաձայն իրենց արտահայտած նշանակության և գործածության, բաժանվում են երկու խմբի՝ **ա) տերմինային բառեր**, այսինքն՝ մասնագիտական նշանակությամբ գործածվող համագործածական բառեր, ինչպես՝ *անձ, անփուլ թուլ թյուլ ն, բողոքել, բռնություն, բ) տերմիններ*, «որոնք միայն տերմինաբանական նշանակություններ ունեն, անկախ այն բանից, թե նրանք գործառնական տեսակետից մասսայական և առօրեական գործածություն ունե՞ն, թե ոչ»³: Իրավաբանական այսպիսի տերմինները բաժանում ենք երկու ենթախմբերի՝

ա) Չուտ իրավաբանական տերմիններ, ինչպես՝ *պիբի, ամբաստանյալ, արգելակալ անք, դատական արձանագրություն ն, դատաստացություն ն* և այլն:

բ) Տերմիններ, որոնք նույն կամ տարբեր նշանակություններով գործածվում են առանձին տերմինահամակարգերում, ինչպես՝ **լեզու իզգացիա** - (իրավ. քղբ.): Լեզուացում՝ օրինականացում՝ իրավական նորմների կողմից կազմակերպության օրինական գործունեության ճանաչումը, **Էմբարգո** - 1. (տնտ. գ.) Որևէ բանի արտահանման ու ներմուծման արգելք: 2. (իրավ. բ.) Օտար տերության պատկանող ունեցվածքի (նավի, բեռների ևն) ներկայում, նավարգելք:

Ինչպես իրավական, այնպես էլ ցանկացած մասնագիտական լեզվի բառապաշարում լեզվական անխուսափելի երևույթներ են տերմինային բազմիմաստությունն ու հոմանիշությունը: Բազմիմաստ և հոմանիշ տերմինների ոչ ճիշտ կիրառումը հաճախ պատճառ է դառնում իմաստային խախտումների, սահմանումների աղավաղումների, գուճահեռությունների, կրկնաբանությունների և այլ բացասական երևույթների: Խնդրի լուծման համար տերմինաբանությունը տալիս է **1 հասկացությունը 1 բառային ձև** սկզբունքը:

Տերմինային բազմիմաստությունն իր գործառնական իրականացում է երկու ճանապարհով՝ **արտահամակարգային և ներհամակարգային**:

Արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարում արտահամակարգային բազմիմաստությունն արտահայտող տերմինները տարբերակել ենք հետևյալ խմբերի⁴.

ա) տերմինային նշանակություններ **ստացած համագործածական բառեր**՝ ինչպես՝ *անձ, առարկա, ասացույց, սպառյալ*:

³ **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 320:
⁴ Տերմինների բացատրությունը տե՛ս **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1-2, Երևան, 1976: **Սալ խառնուց Ստ.**, Յայերեն բացատրական բառարան, հ. 1-4, Երևան, 1944-45:

բ) միայն տերմինային արժեք ունեցող բառեր հետևյալ խմբավորմամբ՝

➤ առավել ասես իրավական և եզրվի բառապաշարում գործածվող տերմիններ, որոնք այլ մասնագիտական նշանակությամբ կիրառվում են տարբեր տերմինահամակարգերում: Սրանք իրավաբանական տերմինահամակարգում հազվադեպ հանդիպող բազմիմաստ բառեր են, ինչպես՝ **դատավոր (իրավբ., սարտ), դատաբար տպան (իրավբ., բնատ), կողեքս (իրավ., քղբ.):**

➤ առավել ասես տարբեր տերմինահամակարգերում գործածվող տերմիններ, որոնք համապատասխան մասնագիտական նշանակությամբ կիրառվում են նաև իրավաբանական տերմինահամակարգում: Այս տերմինները հիմնականում միջազգային նշանակություն ունեցող բառեր են: Օրինակ՝ **ապաք (Ֆին., իրավբ.), գլոսսարիում (լեզվբ., իրավբ.), ռեստիտուցիա (կենսբ., իրավբ.):**

Ներհամակարգային բազմիմաստությունը, որը տերմինի երկու կամ ավելի նշանակությունների պատկանելն է միևնույն տերմինահամակարգին, օրինակ ափ, հետևաբար խրախուսելի էրևոյթ չէ, քանի որ այդ պատճառով հաճախ են առաջանում ավելորդ կրկնաբանություններ, տերմինների սահմանումների խախտում, իմաստային շփոթություններ և այլն: Տերմինային նշանակությունները կարող են պատկանել ինչպես իրավունքի միևնույն ճյուղին, այնպես էլ տարբեր ճյուղերի, օրինակ՝ **քրեական գործի հարուցում** տերմին բառակապակցությունն իր երեք տերմինային նշանակություններով արտահայտում է քրեական դատավարության տարբեր հասկացություններ՝ «1) քրեական դատավարության ինքնուրույն փուլ, 2) քրեադատավարական ակտ՝ որոշում, 3) քրեական դատավարության ինստիտուտ»⁵ Այսպիսի օրինակներ են՝ **դատաբարություն, սպռապանություն, վնաս** և այլն:

Իրավաբանական տերմինահամակարգում հանդիպում են **տերմինների հոմանիշային** (նույնանիշային կամ համանիշային) **խմբեր,** որոնք թերևս մասնագետի համար նույն, բայց մասնագիտական հմտություններ չունեցող անձի համար կարող են ընկալվել որպես տարբեր հասկացությունների արտահայտող բառեր, ինչպես՝ **դատաբար տպան - սպռապան, ենթադատ - ընդդատայ մեղադրող - դատաբար, կալանք - կալանավորում, հանցանք - հանցագործություն** և այլն:

Հայ իրավական խոսքում ակամայից իմաստային շփոթ են առաջացնում նաև այնպիսի տերմիններ, որոնք հաճախ իրենց կազմությամբ նման (հարանուններ) կամ իմաստային նուրբ կապվածություն ունեցող բառեր են, որոնք ոչ մի դեպքում չպետք է նույնացնել կամ ընկալել որպես հոմանիշներ և գործածել մեկը

⁵ «Հայ աստիճանի Հանրապետության քրեական դատավարություն», հատուկ մաս, Երևան, 2005, էջ 9:

մյուս սիփոխարեն, ինչպես՝ **ԼՈՒԾԵԼ-ԼՈՒԾԱՐԵԼ**, հայ ց-հայ ցադիմում, վճիռ-դատավճիռ, ներում-համաներում և այլն:

Երկրորդ ենթալիտում՝ «Իմաստափոխությանը արդի հայ երենի իրավաբանական տերմինահամակարգում», քննում ենք արդի հայ երենի իրավական լեզվի բառայաբար իմաստափոխության դեպքերը, որոնք դրսևորվում են իմաստափոխության երեք տեսակներով՝ **իմաստի նեղացում (գրավ, ընթերակա), իմաստի լայնացում (կարճել, նոտա) և իմաստների հաջորդում (դատաբազ, կապա)**: Առավել ապես մեծ թիվ են կազմում իմաստային նեղացման ենթարկված տերմինները. երևույթ, որ բնորոշ է ցանկացած գիտության տերմինահամակարգի, քանի որ տերմինաբանության պահանջով տերմինները պետք է արտահայտեն հասկացության որոշակիացված և ոչ ընդհանուր իմաստ:

Իմաստափոխության ենթարկված իրավաբանական տերմինները հիմնականում գրաբարից և միջին հայ երենից մեզ իբրև ժամանակակից ունենան, ինչպես նաև համագործածական բառաչերտից համարված, տերմինային արժեք ձեռք բերած բառեր են:

Ատենախոսության **Երրորդ գլուխը՝ «Արդի հայ երենի իրավաբանական տերմինների շերտաբանական և բառակազմական վերլուծությանը»**, բաղկացած է երկու բաժիններից: Առաջին բաժնում ուսումնասիրվում են արդի հայ երենի իրավաբանական տերմիններն ըստ բառաչերտերի, որոնք տվյալ բաժնի առանձին ենթամասեր են՝ **ա ընդհանուր հայ երեն բառերի շերտ բ. հին կամ գրաբարյան բառերի շերտ գ. միջինհայ երենյան բառերի շերտ դ. աշխարհաբարյան բառերի շերտ**: Վերջին բառաչերտը զարգանում և համարվում է հայ երենի երկու տարբերակներում, մասնավորապես արևելահայ երենում: Արևմտահայ երեն իրավաբանական տերմինները սակավաթիվ են: Սրանք կամ միայն արևմտահայ երենին բնորոշ (**դատաբան, թղթածրար**), կամ էլ առավել ապես արևմտահայ երենին բնորոշ բառեր են (**մեղսակից, հանցագիտակ**), որոնք գործածական տեսանկյունից հիմնականում կիրառվում են Սփյուռքի գանգվածային լրատվական միջոցներում:

Աշխարհաբարյան բառաչերտում բազմաբանակ են արևելահայ երեն իրավաբանական տերմինները, որոնք ինչպես միջազգային զանազան փոխարարությունների ձևավորման արդյունքում փոխառված բառեր (**Ֆրանչայզիզ, սկցեպո**), այնպես էլ հայ երենի բառակազմական միջոցներով կազմված նորաստեղծ տերմիններ են: Վերջիններս թե՛ ածանցման և թե՛ բառաբարդման եղանակով կազմված բառեր են⁶:

⁶ Իրավաբանական տերմինների կազմությունը որոշելիս հիմք ենք ընդունում բառամիավորին ավելացած բառակազմական վերջին քայլը:

Իրավաբանական նախաձեռնումները սերմինների կադապրներ՝ ա նախաձեռնում + սրմառ՝ հակահայց, փոխհայց, համիրավ, **բ. նախաձեռնում + վերջաձեռնումները բառեր, նախաձեռնում + բարդ կամ բարդաձեռնումները**՝ հակաիրավակնություն, անժամկետանց, անժամանցելի և այլն:

Իրավաբանական վերջաձեռնումները սերմինների կադապրներ՝ աձեռնումները բառ + վերջաձեռնում, բարդ կամ բարդաձեռնումները բառ + վերջաձեռնում՝ իրավակնություն, մատնադրոշմային, օրինադրյալ և այլն:

Իրավաբանական նորաստեղծ բառերը՝ կազմված բառաբարդման եղանակով, մեծ մասամբ համարական տիպի բարդություններ են, որոնց կազմությունն առավել գործունե կադապրներն են՝

1. **սրմառական կամ բարդ բառ (սերող հիմք) + աձեռնումները բառ (բաղադրող հիմք)**՝ օրինա+սխալած, քրեա+կատարողական, 2. **սրմառական կամ բարդ բառ (սերող հիմք) + բարդաձեռնումները բառ (բաղադրող հիմք)**՝ քրեա+դատավարական, դատաբժշկա+փորձաքննություն, 3. **սրմառ (սերող հիմք) + սրմառական կամ բարդ բառ (բաղադրող հիմք)** – հանրապետական, արգելափակում:

Հայ իրավաբանական նորաստեղծ տերմիններից զատ, ընդգրկում է **հայերենի ներքին զարգացումների հետևանքով նոր իմաստ ձեռք բերած բառեր (դեպք, մասնագետ, նիստ վարձկանություն)**:

Առենախոսություն **երրորդ գլխի երկրորդ բաժնում** քննվում են արդի հայերենի իրավաբանական տերմինների բառակազմական առանձնահատկությունները: Հիմք ընդունելով ամենաընդհանուր բառակազմական հատկանիշները՝ արդի հայերենի իրավաբանական բոլոր բաղադրյալ տերմինները բաժանում ենք երեք տիպի՝ **վերլուծական, համարական և հասարակական**, որոնք քննում ենք առանձին ենթաբաժիններով:

Իրավաբանական տերմինահամակարգում սովոր թիվ են կազմում վերլուծական բաղադրությունները, մասնավորապես **հարադրական բարդություններն** (արգելանքի վերցնել, վճիռը բեկանել) ու **կայուն բառակապակցությունները** (շահագրգիռ կողմ, դատական վեճ): Բիչ են **հատվածական բաղադրությունները**, որոնց բաղադրիչները կապակցված են ինչպես համարասանակ (օրինաիրավական, իրավապայմանագրային), այնպես էլ ստորադասական հարաբերություն (դատաբժշկական, քրեաիրավական):

Իրավաբանական տերմինահամակարգում զգալի թիվ են կազմում **համարական բաղադրությունները**, որոնցում գերակշռում են թե՛ բարդությունները և թե՛ աձեռնումները: **Համարական իսկական բարդությունների** մեծ մասը հոդակապով բառեր են, ինչպես՝ *վարձակալ, պահանջատեր, վճռագիր*: Դրանք առավել ապաստանում են հետևյալ կադապրներով՝ **ա գոյական +**

գոյ ական՝ ապահարգանագիր, բաժնետիր, **բ. ածական + գոյ ական**՝ դատածախս (դատական ծախս), բազմահանցանք, **գ. գոյ ական + բայ սահմք**՝ կտակակատար, հայցատու և այլն:

Ըստ բաղադրիչների տերմինայնություն՝ համարական բարդությունները հանդես են գալիս դասակարգման չորս կաղապարով՝ **1. տերմին + տերմին**՝ հանցափորձ, իրավագանց, **2. բառ + տերմին**՝ կրկնադատ, բազմահանցանք, **3. տերմին + բառ**՝ հանցակից, օրենսգիրք, **4. բառ + բառ**՝ հոգեզավակ, եկամուտ:

Իրավաբանական համարական ածանցումները առավել հաճախ կազմվում են **-ույնություն** (դատախազություն), **-ում** (մեղսագրում), **-ական** (քննչական), **-անք** (կալանք), **-յալ** (կակածյալ), **-ող** (տուժող) վերջածանցներով և **առ-** (առբերել, ազդեցություն), **գեր(ա)-** (գերզանց, գերշահույթ), **համ(ա)-** (համաներում, համահայցվորներ), **ներ-** (ներդնել, ներմուծում), **վեր(ա)-** (վերգրում, վերաքննիչ) և այլ նախածանցներով: Իրավական լեզվի բառապաշարում նկատվում է **չ-** նախածանցով նոր բառեր կազմելու միտում, ինչպես՝ **չապացուցվածություն**, **չհիմնավորվածություն** տերմինները:

Իրավական լեզվի հապավական բաղադրություններին ստեղծումն ու տարածումը սկսվում է գլխավորապես 20-րդ դարի վերջին՝ պայմանավորված ՀՀ անկախացմամբ: Իրավաբանական տերմինների հապավումներն առավելապես տառային տեսակին են պատկանում և անվանում են պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, պայմանագրերի, դաշնագրերի և այլ հասկացություններ, որոնք գրվում են հայերեն տառարձույթով՝ *ՄԻՀՀ – Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր*, *ԵՄ – Եվրոպական միություն*, *ԴԱՀԿ – Դատական ակտերի հարկադիր կատարում*, *ՎԴ – Վարչական դատարան* և այլն:

ՀՀ իրավական ակտերում, հապավումներից զատ, գործածվում են նաև տերմինների կրճատ գրություններ՝ համառոտագրություններ՝ **ՀՀ քաղ. դատ օր. – ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք**, **ՀՀ քր. դատ օր. – ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք**, **ՀՀ վարչ. դատ օր. – ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք** և այլն:

Անանձին ենթաբաժնով ենք ներկայացնում արդի հայերենի իրավաբանական տերմինների արևելահայերեն-արևմտահայերեն բառակազմական տարբերակները՝ համանուն վերնագրով: Խոսքը վերաբերում է լեզվական այն երևույթին, երբ միևնույն հասկացության արտահայտման համար տարբերակներից յուրեքանչյուրը գործածում է բառակազմական տարբեր բաղադրիչներով (թե՛ հիմնական և թե՛ երկրորդական ձևերով) կազմված տերմիններ, որոնք քննության ենք

⁷ Իրավաբանական հապավական բաղադրությունները տե՛ս «Իրավունք և առողջ ապահովություն» կայքէջում՝ <http://www.healthrights.am/practitioner-guide-arm/more/977/>:

ենթարկում՝ հիմք ընդունելով լեզվաբան Ռուբեն Սաքապետյանի ամանձնացրած ենթախմբերը:

1. Տարամառ նույնանիշներ՝ *աղերսարկուլ – հայցվոր, ամբաստանություն – մեղադրանք:* **2. Սերող հիմքերով իրափց տարբերվող տերմիններ՝** *դատաբեկ – վճռաբեկ, եղեռնափորձ – մահափորձ:* **3. Բաղադրող հիմքերով տարբերվող իրավաբանական տերմիններ՝** *բաժնեթուղթ – բաժնետոմս, դատակնիք – դատավճիռ* և այլն:

Ամանձնացրել ենք **արևմտահայերեն իրավաբանական տերմինների հոմանիշային խմբեր**, ինչպես՝ *ամբաստան – մեղադրիչ – դատախազ, դատակոչ – հրավիրաթուղթ – հրավիրագիր – ծանուցագիր* և այլն:

ԵԶՐԱԿԱՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

Ա Հայ իրավագիտական միտքը, անցնելով պատմական զարգացման որոշակի շրջափուլեր, ձևավորվել է դեռևս վաղ ժամանակներում՝ արտահայտվելով Արարտյան՝ Արամե, Սարգուրի և այլ թագավորների արձանագրություններում, ինչպես նաև Թադեոս առաքյալին, Գրիգոր Լուսավորչին և այլ մտածողներին վերագրվող կանոնական գործերում: Իրավական խոսք կառուցելու համար ինքնաբերաբար կազմվում, փոխառվում էին մտքեր, դրանք արտահայտող բառեր ու բառակապակցություններ, որոնք էլ պետք է հիմք դնեին հայ իրավական լեզվի բառապաշարի ձևավորմանը:

Համաձայն իրավաբանական տերմինների ծագումնաբանական քննության՝

1) Արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարի բառամիջուկը կազմող տերմինների զգալի մասը հնդեվրոպական նախալեզվից ժառանգած բնիկ հայերեն և հին, հնագույն փոխառյալ տերմիններ են, ինչպես նաև դրանցով կազմված բաղադրություններ, որոնց զգալի մասը՝ իբրև տերմինային արժեք ունեցող բառեր, առաջին անգամ գիտականորեն սահմանվել և գործածվել է Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի» աշխատությունում:

2) Հին և հնագույն փոխառություններից հայ իրավական լեզվի բառապաշարում մնայուն արժեքներ են պահպանել փոխառված տերմինները:

3) Իրավաբանական բնիկ հայերեն բառերն ու հին, հնագույն փոխառությունները ոչ միայն շարունակում են գործածվել ներկայիս հայ իրավական աղբյուրներում, այլև էական նշանակություն ունեն նորակազմ տերմինների բառակազմական գործընթացում:

4) Ժամանակակից իրավական լեզվի բառապաշարի համալրման աղբյուրներ են նոր կամ նորագույն փոխառությունները, որոնք նախ լատինական, ապա հունական, անգլիական, գերմանական,

Ֆրանսիական ծագման բառեր են՝ փոխառված մեծավ մասամբ ճշգրտությունի միջնորդությամբ:

5) Իրավաբանական տերմինների մի որոշակի խումբ էլ կազմվում է պատճենման ճանապարհով: Թվային գերազանցությամբ առանձնանում են մասնավորապես կառուցվածքային պատճենմամբ կազմված իրավաբանական տերմինները:

Բ. Արդի հայերենի իրավաբանական տերմինների իմաստագործառական քննությունից պարզվում է.

1) Սույն մասնագիտական բառերը, պայմանավորված հայ իրավունքի բազմագործառույթ հատկանիշով, բազմաաղբյուր է բազմանշանակ բառեր են, ուստի դրանք կյանքի տարբեր բնագավառներ ներկայացնող հասկացությունների անվանումներ են: Տերմինները, առաջնորդվելով ՀՀ իրավական ակտերի լեզվի ճշգրիտ կառուցման համար սահմանված օրենսդրության և առհասարակ տերմինաբանության կանոններով, կիրառական դաշտում խտորեն պահպանում են իրենց արտահայտած հասկացության իմաստային ծավալը: Այդ կանոնները առավել ապահովում են տերմինների մենիմաստությունը:

2) Տերմինաբանության յուրաքանչյուր միավոր առհասարակ բառային միավոր է՝ դրսևորված իմաստաբանական բոլոր հատկանիշներով: Ուստի իրավաբանական տերմինաբանական չի կարող բացարձակապես արգելք դնել լեզվական այնպիսի անխուսափելի երևույթների առջև, ինչպիսիք են տերմինային բազմիմաստությունն ու հոմանիշությունը: Իրավաբանական բազմիմաստ և բացարձակ հոմանիշ տերմինների դեռևս անկանխելի գործածման համար ՀՀ օրենսդրությունը սահմանել է համապատասխան կանոններ, քանի որ դրանց ոչ ճիշտ կիրառումը իրավական խոսքում հանգեցնում է տերմինների իմաստային խախտումների, սահմանումների աղավաղումների, գուճահեռությունների և այլ բացասական երևույթների: Խնդրի լուծման համար տերմինաբանությունը տալիս է **1 հասկացություն** **1 բառային ձև** սկզբունքը:

3) Ժամանակակից իրավական ակտերում ակտիվ կիրառություն ունեն իմաստով կամ ձևով նման տերմիններ, որոնցից մեկը մյուսի փոխարեն գործածելը ստեղծում է իրավական խոսքի անճշտություն: Այդ տերմինները ինչպես գրաբարից, միջին հայերենից ժառանգված, այնպես էլ նոր ժամանակներում կազմված բավականին հաջողված բառեր են: Ուստի խնդրի լուծման ճիշտ տարբերակ է, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի իրավական ցանկացած պաշտոնական տեղեկատվական աղբյուրի միջոցով գոնե որոշակի պատկերացում

ու ն են ա դր ան ց ո վ ադ տ ա հ ա յ տ վ ա ծ հ ա ս կ ա ց ու թ յ ու ն ն եր ի վ եր ա ք եր յ ալ :

4) Արդի հայ երեւնի իրավական լեզվի բառապաշարում իմաստափոխությունը առկա է գրեթե իր բոլոր տեսակներով: Սակայն թվով գերակշռում են այն տերմինները, որոնք ենթարկվել են իմաստային նեղացման: Դրանք մեծ մասամբ համագործածական բառաչերտի բառեր են, որոնց տրվել են գիտական սահմանումներ:

Իմաստային ընդլայնման և իմաստների փոխադրուման ենթարկված բառերը հիմնականում պատմական զարգացում ապրած գրաբարյան և միջինհայերենյան բառեր են, որոնք ներկայիս իրավական ակտերի լեզվում գործածվում են բոլորովին նոր նշանակություներով:

9. 3այ իրավական լեզվի բառապաշարը հայերեւնի զարգացման փուլերում (հին, միջին և նոր գրական հայերեն) ձևավորված բառաչերտերի միասնական և կուռ համակարգ է: Այն ընդգրկում է իրավաբանական տերմինների ընդհանուր հայերենյան, գրաբարյան, միջինհայերենյան և աշխարհաբարյան բառաչերտեր, որոնք ոչ միայն ներկայիս իրավական մտքի արտահայտման միջոցներ են, այլ և հայ իրավունքի վաղեմության պատմական ապացույցներ:

Արդի հայերեւնի իրավաբանական տերմինների շերտաբանական քննություննից պարզվում է.

1) Ընդհանուր հայերենյան իրավաբանական տերմինները կազմում են արդի հայերեւնի իրավաբանական բառապաշարի հիմնաշերտի գգալի մասը: Դրանք, ըստ ծագման, բնիկ և փոխառյալ, ըստ կազմության, պարզ և բաղադրյալ բառեր են, որոնք, գործածվելով գրաբարյան և միջինհայերենյան իրավական աղբյուրներում, ժամանակակից օրենսդրական լեզվի կենսունակ բառամիավորներ են:

2) Իրավաբանական տերմինները գրաբարյան և միջինհայերենյան բառաչերտերը ժամանակակից իրավական լեզվում դիտվում են որպես հնաբանություններ, որոնք, այլևս չգործածվելով ներկայիս օրենսդրական ակտերում, դարձել են պատմական մնայուն արժեքներ: Դրանք իրենց արտահայտած հասկացություններով այսօր իրավական լեզվում կատարում են մեկ գործառնություն. այն է՝ արտացոլում են այն բոլոր պատմական դարաշրջանները, որոնցով իր ձևավորման և զարգացման ուղին է գծել հայկական իրավունքը:

3) Թվային գերազանցությամբ հատկանշական է աշխարհաբարյան բառաչերտը, որը համալրվում է հայերեւնի երկու տարբերակներում, մասնավորապես արևելահայերենում:

ա) Արևմտահայ երեւն իրավաբանական տերմինները սակավաթիվ են: Սրանք կա՛մ միայն արևմտահայ երեւնին բնորոշ, կա՛մ էլ առավելապէս արևմտահայ երեւնին բնորոշ բառեր են, որոնք գործածական տեսանկյունից հիմնականում կիրառվում են Սփյունռքի զանգվածային լրատվական միջոցներում:

բ) Աշխարհաբարյան բառաշարում բազմաքանակ են արևելահայ երեւն իրավաբանական տերմինները: Դրանց գերակշռութունը հայ երեւնի բառապաշարում պայմանավորված է երկրի անկախապետականութան հովանու ներքո հայ իրավական մտքի ազատ արտահայտմամբ: Արևելահայ երեւն իրավաբանական տերմինները ինչպէս միջազգային զանազան փոխարարերով թուների ձևավորման արդյունքում փոխառված բառեր, այնպէս էլ հայ երեւնի բառակազմական միջոցներով կազմված նորաստեղծ տերմիններ են:

Նորակազմ բառերը գրեթե հավասար քանակությամբ կազմվում են և՛ ածանցման, և՛ բառաբարդման եղանակներով, որի հետևանքով իրավական լեզվի բառապաշարը համալրվում է առավելապէս գոյականներով և ածականներով:

Իրավաբանական տերմինահամակարգում բավականին արդիական են իմաստային նորաբանութունները, որոնց մեծ մասն այսօր հայ երեւնի ներքին զարգացումների արդյունք է:

Իրավական լեզվի նորաստեղծ տերմիններն ու իմաստային նորաբանութուններն այնքան հաճախադեպ են, որ դրանց զգալի մասը դեռևս ընդգրկված չէ ընդհանրական բնույթ կրող բացատրական բառարաններում, և ընթերցողն այդ եզրերին կարող է ծանոթանալ միայն մասնագիտական աղբյուրներին:

Դ. Արդի հայ երեւնի իրավաբանական տերմինների բառակազմական վերլուծութունը ի հայտ է բերում հետևյալ առանձնահատկութունները.

1) Իրավաբանական տերմինահամակարգը իր զարգացման արդի փուլում, պահպանելով անցած ժամանակաշրջաններից ժառանգած տերմինների զգալի մասը, համալրվում է մեծ մասամբ հայ երեւնի բառակազմական եղանակների օգնությամբ: Գերակշռում են հատկապէս բաղադրյալ տերմինները, որոնց մեջ գրեթե անհնար է թվային գերազանցությամբ առանձնացնել վերլուծական և համարական բաղադրութունները: Իրավական ակտերի հստակ, պարզ և մատչելի բնույթը թույլ է չի տալ իս համառոտագրութուններին և հասպտակ մեծի հաճախակի կիրառութունը:

2) Իրավագիտական խոսքում երբեմն միաբառ տերմինները լիարժեքորեն և ճշգրտորեն չեն կարողանում արտահայտել որոշ մասնագիտական երևույթների իմաստներ, ուստի դրանց փոխարեն

գործածվում են վերլուծական բաղադրություններ, որոնցում թվային գերազանցությունը առանձնանում են տերմին բառակապակցությունները: Սրանք առավելապես կազմվում են **ածական + գոյական, դերբայ կամ դերբայական դարձված + գոյական, գոյական + գոյական, լրացում + բայ անուն կաղապարներով:**

3) Համադրական բաղադրություններում զգալի թիվ են կազմում համադրական իսկական բարդություններն ու ածանցավոր բառերը:

Համադրական իսկական բարդություններն առավելապես կազմվում են **գոյական + գոյական, գոյական + բայ սահմք, ածական + գոյական** կաղապարներով, իսկ ըստ բաղադրիչների տերմինայնության՝ **տերմին + տերմին, տերմին + բառ, բառ + տերմին, բառ + բառ** կաղապարներով:

4) Իրավաբանական տերմինների ածանցման գործընթացում առավելակտիվ են **-ույություն, -ում, -ական, -անք, -յալ, -ող** վերջածանցներն ու գրեթե բոլոր նախածանցները՝ **ան-, ապ(ա)-, արս(ա)-, հակ(ա)-, համ(ա)-, նախ(ա)-, վեր(ա)-** և այլն:

5) Բառաբարդման և ածանցման եղանակներով մեծ մասամբ կազմվում են գոյական, ածական և բայ խոսքի մասերներկայացնող տերմիններ:

6) Արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարում արևելահայերեն - արևմտահայերեն նույն իմաստն արտահայտող, տարբեր բաղադրիչներով (և՛ հիմնական, և՛ բառակազմական ձևույթներով) կազմված տերմինների գույքադրական քննությունը ոչ միայն ընդգծում է մի շարք ուշագրավ օրինակապիտություններ, այլև մեկանգամ ևս փաստում գրական հայերենի երկու ճյուղերի ոչ նույնաբնույթ զարգացումը և ավելի տեսանելի դարձնում երկու ճյուղերի իրավական լեզվի բառաշարի և առհասարակ տերմինագիտության մեջ ոչ խրախուսելի երևույթի՝ ակամայից լայն տարածում ստացած հոմանիշություն անկայությունը:

Ե. Արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարը անընդմեջ փոփոխվող շարժական համակարգ է, սակայն լիարժեքորեն ոչ հասկանալի հասարակության բոլոր գանգվածներին: Սա պայմանավորված է ոչ միայն իրավական խոսքի բարդաբնույթ լինելով, այլև իրավական տերմինահամակարգում ստեղծված հետևյալ հանգույցներով:

1) Տերմինային անվանումները տարաբնույթ են՝ հագեցած փոխառություններով, որոնց զգալի մասի երկարաչունչ, անհասկանալի լինելը հասարակության համար դժվարացնում է իրավանորմերի հեշտ ընկալումը: Փոխառյալ բառերը հայացնելիս երբեմն հարցին լուծում տալու փոխարեն կատարվում է հակառակը,

քանի որ արդյունքում կազմվում են ոչ պակաս երկարաշունչ ու անհասկանալի հայերեն բառեր, որոնք այդպես էլ կիրառական ակտիվության չեն դրսևորում:

2) Իրավաբանական տերմինների նշանակությունը բացատրելիս հաճախ են հանդիպում ծավալուն ու բարդ բացատրություններ, որոնք մասնագիտական գրականության և բառարանների թերի կողմերից են:

3) Իրավական լեզվում առկա տերմինային բացարձակ հոմանիշությունն ու բազմիմաստությունը թեև լեզվական անխուսափելի երևույթներ են, այնուամենայնիվ կարող են բացասաբար ազդել իրավական մտքի ընկալմանը: Նույնը վերաբերում է նաև այն տերմիններին, որոնք նման են կազմության ամբկամունեն իմաստային նուրբ կապվածություն:

Թվարկվածները իրավատերմինաամակարգի լուրջ թերություններ են, որոնք հասարակ քաղաքացուն վանում են իրավական գրականության կարդալուց: Ուստի խնդիրը լուծելու նպատակաուղղված քայլեր կարող են լինել՝

• կրթական մակարդակում իրավագիտության բոլոր ճյուղերի, դրանց հետ կապված տերմինների վերաբերյալ տարրական իմացությունն հաղորդելը տեսականի և գործնականի համադրմամբ (օրինակ՝ նյութը հաղորդել դասագրքերի և դատական բաց նիստերին ներկայգտնվելու միջոցով),

• լեզվաբանների և իրավագետների համատեղ գործունեությամբ իրավատերմինաբանական վերլուծական աշխատություններ, գիտական հոդվածներ հրատարակելը, բառարաններ կազմելը,

• հեռուստաադիոհաղորդումներ պատրաստելը:

Նշված գործողությունները ծավալելու առաջնահերթ նախապայման պետք է լինի հասարակությանը նյութի մատչելի մատուցումը:

Այնուամենայնիվ, հայ իրավական լեզվի բառապաշարը մշտապես թարմացվող, կատարելագործվող շարժական համակարգ է: Այն չի խուսափում նոր տերմիններ (թե՛ փոխառյալ, թե՛ սեփական բառակազմական միջոցներով կազմված բառեր) համալրելու, հները նորերով փոխարինելու, լեզվական բառամիավորներ վերափոխառվորելով՝ նրանց տերմինային արժեք հաղորդելու և արդեն իսկ անգործածական տերմինները մի կողմ դնելու անհրաժեշտությունից:

Հայ իրավունքը և նրա լեզուն պետք է լինեն հասարակությանը մոտ, քանի որ դրանց զարգացումը ընթանում է հասարակական կյանքի բոլոր բնագավառներում:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում:

1. **Ա Ղարսլյան,** Հայ իրավունքի ծագումը և իրավաբանական տերմինների առաջացման խթանները, «Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈԲԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու», ԵՊՀ հրատ., Եր., 2013, №2 (240), էջ 11-15:

2. **Ա Ղարսլյան,** Հայերենի իրավաբանական տերմինները միջնադարի դատական համակարգում, «Կրթությունը և գիտությունը Արցախում» (հանդես), «Ասողիկ» հրատ., Եր., 2013, №1-2, էջ 137-143:

3. **Ա Ղարսլյան,** Արդի հայերենի իրավաբանական նորաստեղծ տերմինները, «Դատական իշխանություն» (գիտամեթոդական ամսագիր), «Անտարես» հրատ., Եր., 2015, №11-12 (197-198), էջ 116-122:

4. **Ա Ղարսլյան,** Տերմինային բազմիմաստությունն ու հոմանիշությունը արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարում, «Պետություն և իրավունք» (հանդես), ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, Եր., 2016, №1 (71), էջ 120-127:

5. **Ա Ղարսլյան,** Արդի հայերենի իրավաբանական տերմինների արեւելահայերեն-արեւմտահայերեն բառակազմական տարբերակներ, «Բանբեր», Երևանի Վ.Բրյունովի անվան պետական լեզվաիւսարարական գիտական համալսարան, «Լինգվա» հրատ., 2016, 1(38), էջ 381-389:

КАРСЛЯН АННА РУБЕНОВНА
ЮРИДИЧЕСКИЕ ТЕРМИНЫ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 – <<Армянский язык>>.

Защита состоится 6-ого марта, 2017г., в 15⁰⁰ч. на заседании специализированного совета ВАК по лингвистике 019 при Институте языка им. Р. Ачаряна НАН РА (адрес: 0015, Ереван, ул. Григора Лусаворича 15).

РЕЗЮМЕ

Цель данной научной работы – изучение армянской правовой лексики по этапам его развития с ранних времен формирования армянской правовой мысли до наших дней. Мы постарались достичь цели посредством этимологического, послонного, словообразовательного, семантико-практического анализа юридических терминов.

Лексика армянского юридического языка, которая формирует язык текущего законодательства РА, к сожалению, как ни странно, до сих пор не удостоилась пристального анализа. Опубликована одна научная статья и исследованы более десятка профессиональных лексикографических работ, которые нуждаются в переработке и усовершенствовании. Следовательно, актуальность данной работы обусловлена недостаточным уровнем проведенных исследований лексики юридического языка.

Фактологический материал данного исследования – лексика современного правового языка. В ходе нашего исследования мы коснулись одновременно древней, средневековой и современной юридической литературы, в частности, источников, обеспечивших развитие армянской правовой мысли, в том числе словарей, имеющих профессиональное, профессионально-лингвостопоставительное значение.

Лексика современного армянского юридического языка впервые стала материалом отдельного исследования. Данное исследование, по существу, является первой попыткой в сфере научной оценки и введения в оборот лексики текущего законодательства Республики Армения и вообще лексики любого официального юридического документа.

Данная работа может способствовать повышению уровня правового сознания в армянском обществе – правильному восприятию правовой речи, норм, выполнению соответствующих правовых действий, а также стать источником для дальнейших исследований системы юридических терминов в сфере терминоведения.

Диссертация может быть полезным как для специалистов, исследующих лексику армянского правового языка, так и для студентов профильных факультетов, учеников старших школ и вообще армянского общества.

Структура диссертации исходит из поставленных целей, рассматриваемых проблем и результатов. Работа состоит из введения, трех глав соответствующими

подглавами, заключения и списка использованных аббревиатур и использованной литературы. В конце приведено приложение с толкованием использованных в работе юридических терминов. Объем работы - 161 страница. В основе распределения глав диссертации лежат принципы и методы исследования любой лексики в языкознании, которые делают более видимыми конструктивный характер системы юридических терминов.

Во **Введении** представляются цели и задачи исследования, степень изученности вопроса, а также обоснованы актуальность и значение темы.

Первая глава диссертации – "Этимологический анализ юридических терминов современного армянского языка" - состоит из двух подглав, анализируется и представляется этимология юридических терминов. В заключении мы выделяем исконные и заимствованные юридические термины, которые являются как древнейшими, так и новейшими лексическими единицами.

Определенная группа юридических терминов сформирована путем калькирования, которое является видом заимствования. Количественным приоритетом выделяются, в частности, юридические термины, образованные структурным калькированием.

Вторая глава – "Семантико-практические особенности юридических терминов современного армянского языка" - состоит из двух подглав. В ней рассмотрены положительные и негативные смысловые особенности, случаи изменения смысла юридической лексики современного армянского языка, раскрывается историческое смысловое развитие некоторых профессиональных терминов, используемых в языке законодательства РА, случаи терминологической полисемии, синонимии и паронимии.

Третья глава диссертации – "Послойный и словообразовательный анализ юридических терминов современного армянского языка" - состоит из двух частей. Первая часть состоит из четырех параграфов. В ней представлен послойный анализ юридических терминов. Вторая часть также состоит из четырех параграфов. В ней рассматриваются словообразовательные особенности аналитических, сопоставительных и аббревиатурных юридических терминов, словообразовательные варианты юридических терминов в западноармянском и восточноармянском языках.

В заключении представлены результаты научной работы и итоги исследования.

Диссертация заканчивается **приложением** с толкованием юридических терминов, использованных в работе.

ANNA RUBEN GHARSLYAN MODERN ARMENIAN LEGAL TERMS

Thesis for the degree of candidate of philological sciences, specialty 10.02.01- Armenian Language.

The defense of the thesis will be held on March 6, 2017, at 15⁰⁰, at the session of the Specialized Council on Linguistics 019 HAC (Higher Attestation Commission) in the

SUMMARY

The present scientific work was undertaken with the aim of studying Armenian legal vocabulary with all the stages of its development, starting from early periods of the formation of Armenian legal thought up to the present time. We have tried to carry out this aim by means of genealogical, layered, word formation, semantic-functional analyses.

Armenian legal vocabulary which is the basis for the current RA legislation language, unfortunately, and oddly enough, has not been examined much. There is one published scientific article and more than dozens of works on professional dictionary compilation, which, however, need to be revised and improved. Therefore, the topicality of the present work is determined by insufficient study of legal vocabulary.

The factual material of the research is Modern Armenian legal vocabulary. During our study we have simultaneously touched upon old, medieval and modern Armenian legal literature, in particular referring to the sources that promoted the development of Armenian legal thought, including professional dictionaries and dictionaries of professional comparative linguistic value.

Modern Armenian legal vocabulary has become a separate scientific research material for the first time. The present study is actually the first attempt to evaluate and put into scientific circulation the vocabulary of the current RA legislation and in general of any official documentation. This work can contribute to raising the level of legal awareness in Armenian society, proper understanding of legal language and norms, taking relevant legal actions as well as it can become a source for further research on legal terminology. The dissertation can be useful for the professionals studying Armenian legal vocabulary, students specializing in this field, high school students, as well as Armenian society in general.

The structure of the dissertation stems from the proposed aim, objectives and results. It consists of introduction, three chapters with the corresponding subchapters, conclusion, list of abbreviations and bibliography. At the end there is an appendix with the explanation of legal terms applied in the work. The volume of the work is 161 pages. The principles and methods of the allocation of dissertation chapters are the ones applied in linguistics for the study of any word-stock, which makes the constructive nature of legal terminology more visible.

In the **Introduction** the extent to which the issue is examined, dissertation aims and objectives, as well as the topicality and significance of the topic are justified.

The first chapter of the dissertation entitled "**Genealogical Investigation of Modern Armenian Legal Terms**", consisting of two subchapters, examines and presents the origin of legal terms. As a result, native and borrowed legal terms are distinguished which are lexical units of ancient as well as modern times.

The second chapter entitled "**Sematic-functional Peculiarities of Modern Armenian Legal Terms**" also consists of two subchapters. It examines positive and negative semantic peculiarities of Modern Armenian legal vocabulary as well as cases of semantic change, reveals the semantic historical development of some professional terms applied in RA legislation, cases of polysemy, synonymy and paronymy.

The third chapter of the dissertation entitled "**Layered and Word-formation Analyses of Modern Armenian Legal Terms**" consists of two parts. The first section consisting of four paragraphs examines and presents the layered analysis of legal terms. The second section also consisting of four paragraphs studies the word-formation peculiarities of analytical, synthetic and abbreviated legal terms as well as the word-building variants of Western and Eastern Armenian legal terms.

The conclusion represents the findings and the results of the scientific work.

The dissertation ends with an appendix that gives an explanation to legal terms applied in the work.